ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

--- մարտի 2022 թվականի №---Ա
ք. Երևան

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՆՁՆԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2021 թվականի դեկտեմբերի 23-ի №Ե/35/3340-21 գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով համաձայնություն տալ Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող ու էլեկտրակայանին հարակից տարածքում գտնվող 9069 քմ մակերեսով հողատարածքը «ՀԱԷԿ-ի շինարարություն» փակ բաժնետիրական ընկերությանը վարձակալության իրավունքով հանձնելու գործարքի (այսուհետ՝ Գործարք) կնքմանը,

բ) Հանձնաժողովի կողմից Գործարքին համաձայնություն տալը, «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, չի խախտում էներգետիկ համակարգի հուսալիությունը, անվտանգությունը և ներքին շուկայի սպառողների շահերը, Ընկերության ներկայացրած փաստաթղթերը և տեղեկատվությունը համապատասխանում են Հանձնաժողովի սահմանած կարգի պահանջներին, իսկ անհրաժեշտ փորձ ունենալու վերաբերյալ դրույթը Գործարքի նկատմամբ կիրառելի չէ, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 27-ի №39Ն որոշմամբ հաստատված կարգը, Հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող ու էլեկտրակայանին հարակից տարածքում գտնվող 9069 քմ մակերեսով հողատարածքը «ՀԱԷԿ-ի շինարարություն» փակ բաժնետիրական ընկերությանը վարձակալության իրավունքով հանձնելու գործարքի կնքմանը:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված գործարքը կարող է կնքվել որոշումն ուժի մեջ մտնելու պահից վեցամսյա ժամկետում:

3. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված գործարքի կնքումից հետո երկշաբաթյա ժամկետում անհրաժեշտ է Հանձնաժողով ներկայացնել համապատասխան պայմանագրի պատճենը,

2) Գործարքի առարկա հանդիսացող գույքի վարձակալությունից առաջացած գումարը նվազեցվելու է սակագների վերանայման ժամանակ Ընկերությունից առաքվող էլեկտրական էներգիայի սակագնի հաշվարկից:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- մարտի 2022թ.